

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Առնուիդ Սամվելի Վարդանյանի՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման տեսական և գործնական հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ, ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության վերաբերյալ

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող և ընդհանուր առմամբ՝ հասարակության խոցելի և հատուկ վերաբերմունք ունեցող անձանց իրավունքների երաշխավորմանն ուղղված հատուկ ընթացակարգեր նախատեսված լինելու հանգամանքը տվյալ պետության քրեադատավարական համակարգի առաջադեմ բնույթի մասին վկայող հիմնական չափորոշիչներից է: Դա, նախ և առաջ, ցուցիչն է նրա, որ պետությունն առանձնահատուկ կարևորություն է տվել իրենց իրավունքներն ինքնուրույն պաշտպանելու ունակությունից զրկված կամ նման պաշտպանություն իրականացնելու սահմանափակ կարողություններ ունեցող անձանց նկատմամբ վարույթի առանձնահատուկ կանոնների սահմանն այն հաշվով, որպեսզի ապահովվի այդ անձանց իրավունքների՝ քրեական դատավարության ընթացքում հնարավորինս ամբողջական իրացումը և նման անձանց նկատմամբ քրեական դատավարության խնդիրներից բխող ընթացակարգերի ապահովումը: Նման հատուկ ընթացակարգերի շարքում առանձնահատուկ նշանակուն ունի բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների (այսուհետ՝ նաև ԲԲՀՄ) կիրառման հատուկ վարույթը:

Սակայն, ցավալիորեն պետք է արձանագրել, որ ինչպես խորհրդային շրջանի, այնպես էլ՝ արդի ժամանակաշրջանի իրավաբանական միտքը ԲԲՀՄ կիրառման հատուկ վարույթին պատշաճ անդրադարձ չի կատարել՝ տեսական և գործնական բազմաթիվ հարցեր դուրս թողնելով գիտական հետաքրքրությունների շրջանակից: Գիտական հետաքրքրությունների տեսանկյունից այս ինստիտուտի երկրորդում իր բացասական ազդեցությունն է ունեցել նաև օրենսդրական կարգավորումների վրա:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԲԲՀՄ կիրառման հատուկ վարույթին ցույց է տրվել իմիջիայլոց մոտեցում, կարգավորումները թերի և մակերեսային են, բազմաթիվ հարցեր մնացել են չկարգավորված, ինչը իրավակիրառական պրակտիկայում առաջացնում է լուրջ խնդիրներ և հաճախ, ինչպես քրեական հետապնդման մարմինները, այնպես էլ դատարանները առանձին իրավիճակների օրենսդրական կարգավորումների բացակայության պատճառով ստիպված են լինում հենվել քրեական դատավարության սկզբունքների վրա կամ կոնկրետ իրավիճակի նկատմամբ կիրառել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հնարավորինս վերաբերելի և տրամաբանորեն հիմնավորված կարգավորումներ:

Քանի որ քրեական դատավարության օրենսգրքի ընդունումից հետո ԲԲՀՄ-ի կիրառման վարույթին նվիրված քրեադատավարական կարգավորումները գրեթե փոփոխությունների չեն ենթարկվել, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունն այս տարիներին վավերացրել է ոլորտը կարգավորող բազմաթիվ միջազգային պայմանագրեր, խնդրո առարկա կարգավորումների զգալի մասն իրավունքի զարգացման ներկայիս ժամանակաշրջանում չի համապատասխանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին: Ավելնորդ է անգամ խոսել հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի իմպլեմենտացման մասին. քանի որ, ինչպես նշեցի, քրեական դատավարության օրենսգրքի ընդունումից հետո վերաբերելի իրավադրույթները գրեթե փոփոխության չեն ենթարկվել:

Թեև, հանուն արդարության պետք է նշել, որ դատարանների կողմից առանձին դատական ակտերով, այդ թվում՝ վճռաբեկ դատարանի որոշումներով առանձին դրվագային խնդիրներին տրվել են լուծումներ, սակայն, նման թերի իրավական կարգավորումների պայմաններում դատական իրավաստեղծությունն ի գորու չէ ամբողջությամբ չեզոքացնել օրենսդրական կարգավորման բացերը:

Ասվածն անկասկած վկայում է ուսումնասիրության համար ընտրված թեմայի արդիականության մասին: Ավելին, կարելի է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության գիտության շրջանակներում այս թեմայի ուսումնասիրության անհրաժեշտությունը վաղուց հասունացած էր և համոզված են, որ ներկայացված առաջարկներն ու լուծումներն իրենց կիրառումը

կունենան ինչպես օրինաստեղծ գործունեության մեջ, այնպես էլ՝ իրավակիրառական պրակտիկայում:

Հետազոտության արդիականությունը, գիտական հանրույթի համար դրա արժեքը էապես կանխորոշում է նաև այն փաստը, որ հետազոտությունը կատարվել և պաշտպանության է ներկայացվում այնպիսի ժամանակահատվածում, երբ մի կողմից անընդհատ բարձրաձայնվում են գործող իրավակարգավորումներում առկա խնդիրները, մյուս կողմից՝ ակտիվորեն ընթանում են ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի քննարկումները: Այս առումով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը ոչ միայն կարելի է դիտարկել որպես խնդրի վերաբերյալ համապարփակ և ամբողջական հետազոտություն, այլ նաև քրեական դատավարության օրենսգրքի նախագծով առաջարկվող իրավակարգավորումների առաջին, համեմատական հետազոտման վրա հիմնված քննադատական վերլուծություն:

Հետազոտությունն արժևորում է նաև այն հանգամանքը, որ Հեղինակն ուսումնասիրության և վերլուծության է ենթարկել նաև արտասահմանյան բազմաթիվ երկրների քրեական դատավարության օրենսգրքերում առկա կարգավորումները և ԲԲՀՄ կիրառման հատուկ վարույթի առանձին կարգավորումների վերաբերյալ առաջարկներ ներկայացրել հիմնվելով նաև միջազգային լավագույն փորձի վրա:

Աշխատանքի առաջին պարագրաֆում, Հեղինակը վերլուծելով ԲԲՀՄ կիրառման վարույթի դատավարական բնույթի վերաբերյալ տեսական գրականության մեջ առկա մոտեցումները, ինչպես նաև տարբեր երկրներում առկա տարբեր իրավակարգավորումները, արդարացիորեն եզրահանգում է, որ թեև ԲԲՀՄ-ով սոցիալական արդարությունը չի վերականգնվում, ուղղման գործընթաց չի ապահովվում, սակայն կանխվում է հետագա հանցագործությունների կատարումը, այն է՝ իրականացվում է պրևենտիվ արդարադատություն, որի արդյունքում անձը ենթարկվում է սոցիալական ռեաբիլիտացիայի և բուժվում է, որն էլ իր հերթին հանգեցնում է նրա կողմից հետագայում հակաիրավական այլ արարքների կատարման կանխմանը:

Նման պայմաններում Հեղինակն իրավացիորեն փաստում է, որ քրեական օրենքով հետապնդվող բոլոր նպատակներին համահունչ չլինելը, քրեաիրավական հետևանքներ չառաջացնելը թեև վկայում են այն մասին, որ ԲԲՀՄ-ը դասական իմաստով քրեաիրավական բնույթ չունեն, սակայն դրանց կիրառման հիմքում ընկած՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման փաստը վկայում է այն

մասին, որ ԲԲՀՄ-ը ենթակա են նշանակման քրեական դատավարության շրջանակներում: Հետևաբար, քրեական օրենքով արգելված արարք կատարած և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բժշկական բնույթի իրավական ներգործության միջոցների կիրառմամբ ծագող հարաբերությունները դուրս չեն գտնվում քրեաիրավական հարթությունից և նրանց նկատմամբ ԲԲՀՄ-ը ենթակա են նշանակման քրեադատավարական ընթացակարգի կիրառմամբ:

Նույն պարագրաֆում Հեղինակն անդրադառնում է ԲԲՀՄ կիրառման վարույթին հատուկ մասնագիտացված սուբյեկտների ներգրավման նպատակահարմարության հարցին: Խոսելով մասնագիտացված պաշտպանների ներգրավման մասին, ներկայացնելով դրա վերաբերյալ միջազգային փորձն ու եվրոպական դատարանի մոտեցումները՝ Հեղինակը հպանցիկ անդրադարձ է կատարում նաև անչափահասների գործերի օրինակով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործերը ևս մասնագիտացված դատավորների կողմից քննության առնելու նպատակահարմարության հարցին: Սակայն, Հեղինակի վերլուծությունն այդքանից առաջ չի անցնում և անպատասխան են մնում մի շարք հարցեր, մասնավորապես՝ արդյոք ընդհանուր կարգով քրեական գործեր քննող դատավորների գիտելիքները բավարար չեն քննելու նաև ԲԲՀՄ կիրառման վարույթները, արդյոք մասնագիտացված դատավորները պետք է քննեն միայն նման վարույթներ, արդյոք գործի քննության ընթացքում ԲԲՀՄ վարույթ հարուցելու հիմքեր ի հայտ գալու դեպքում վարույթը պետք է փոխանցվի մասնագիտացված դատավորին և այլն: Կարծում ենք, մասնագիտացված դատավորների հարցը բարձրացնելու պարագայում այն ավելի խորը վերլուծության առարկա պետք է լիներ:

Հեղինակն աշխատանքում համեմատական վերլուծություն է կատարել՝ վեր հանելով ԲԲՀՄ կիրառման վարույթի առանձնահատկությունները ընդհանուր իրավունքի և ռոմանագերմանական իրավական համակարգի երկրներում, անդրադառնալով այդ թվում մեթոդոլոգիական նշանակություն ունեցող այնպիսի հարցի, ինչպիսին ապացուցման բեռի բաշխումն է: Սակայն, որպես կատարված համեմատական վերլուծության արդյունք, բացակայում է համապատասխան եզրահանգումը, ուստիև նման վերլուծությունն ըստ էության դառնում է աննպատակ:

Անդրադառնալով ՀՀ գործող ՔԴՕ-ով նախատեսված՝ ԲԲՀՄ-ի կիրառման հատուկ վարույթի երկու տեսակներին՝ անմեղսունակ և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲԲՀՄ կիրառման վարույթներին, Հեղինակն իրավացիորեն արձանագրում է, որ օրենսդիրը ԲԲՀՄ-ի

կիրառման հատուկ վարույթի վերոնշյալ տեսակների սահմանազատման հիմքում դրել է բացառապես անձի՝ հոգեկան հիվանդությամբ հիվանդանալու պահը, ըստ այդմ նախատեսելով՝ քրեական օրենքով արգելված արարքը կատարելու պահին մեղսունակությունը բացառող հոգեկան հիվանդությամբ տառապող և քրեական օրենքով արգելված արարքը կատարելուց հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲԲՀՄ կիրառման վարույթներ: Այս վարույթների համեմատական ուսումնասիրության արդյունքում Հեղինակն իրավացիորեն եզրահանգում է, որ դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի հարուցման հիմքն ու պայմաններն էականորեն չեն տարբերվում անմեղսունակ անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի հարուցման հիմքից և պայմաններից, հետևաբար ԲԲՀՄ-ի կիրառման վարույթը վերը քննարկված երկու տեսակների տարբերակելու անհրաժեշտությունը բացակայում է:

Անդրադառնալով ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության նշանակմանը, Հեղինակը, վերլուծելով առկա օրենսդրական կարգավորումները և իրավակիրառական պրակտիկան, իրավացիորեն առաջարկում է ստացիոնար փորձաքննության անցկացման ձևի ընտրությունը դիտել որպես վերջին միջոց (*last resort*), երբ անձի հոգեկան վիճակի պարզումը փորձաքննության այլ՝ անձի իրավունքների նկատմամբ առավել նվազ միջամտություն դրսևորող ձևի կիրառմամբ անցկացնելը կլինի անհնարին: Հիմնավորումը կարող է լինել ինչպես մասնագիտական կարծիքի, այնպես էլ քննիչի սենյակում անցկացված փորձաքննության ձևով:

Այնուամենայնիվ աշխատանքում տեղ գտած որոշ նկատառումների և Հեղինակի առաջարկությունների հետ դժվար է համաձայնել. Մասնավորապես.

1. Աշխատանքի 2-րդ գլխի առաջին պարագրաֆում Հեղինակն արձանագրելով, որ անկախ նրանից, թե անձի հոգեկան առողջության վերաբերյալ ինչ ապացույցներ են գործով ձեռք բերվել, միևնույնն է, մեղսունակության փաստը ենթակա է հաստատման բացառապես ՀՀ ՔԴՕ 108-րդ հոդվածում նշված հատուկ ապացույցով, եզրահանգում է, որ այդ հոդվածում օրենսդրական եղանակով թվարկված փաստական տվյալների, այդ թվում՝ փորձագիտական եզրակացությունների ձեռքբերման պարտադիրության պահանջն ավանդույթի ուժով, իրավահաջորդության կարգով փոխանցվել է նախկին քրեական դատավարության օրենսգրքերից, որի նախատեսման անհրաժեշտությունը

ներկայումս բացակայում է: Որպես ասվածի հիմնավորում է բերվում այն փաստարկը, որ, օրինակ, թեև ավտոտեխնիկական փորձաքննության նշանակումը ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ գործերով կամ անձի՝ աֆեկտի վիճակում գտնվելը պարզելու համար դատահոգեբանական կամ դատահոգեբուժական փորձաքննության նշանակումն օրենսդրորեն պարտադիր չէ, սակայն գործնականում անվերապահորեն նշանակվում է գործի համար առանցքային տվյալներ ստանալու համար: Ըստ Հեղինակի, քրեական դատավարությունում առավելապես ֆորմալիզմի դրսևորման արդյունքում ձևավորված այս կարգավորումը նույնիսկ որոշակի հակադրության մեջ է գտնվում քննիչի դատավարական ինքնուրույնության հետ, որը երաշխավորված է ՀՀ ՔԴՕ 55-րդ հոդվածի 3-րդ մասում, քանի որ քննիչը լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ գործի քննությանը, իր հայեցողությամբ, ապացույցների ազատ գնահատմամբ ընդունել որոշումներ և իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ, ազատորեն ընտրել քրեական դատավարության խնդիրները լուծելու ուղիների ընտրության հարցը:

Հեղինակի այս պնդումների հետ դժվար է համաձայնել: Ճիշտ է, անձի մեղսունակությունը բացառապես դատահոգեբուժական փորձագետի եզրակացությամբ որոշելու օրենսդրական պահանջը տարիների պատմություն ունի և գրեթե միշտ ամրագրված է եղել տարբեր քրեական դատավարության օրենսգրքերում, սակայն դրա պատճառը ոչ թե ֆորմալիզմի դրսևորումն է, այլ այն գիտակցումը, որ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը հնարավոր է պարզել բացառապես հատուկ մասնագիտական գիտելիքների գործադրմամբ, ուստի այս դեպքում դատահոգեբուժական փորձաքննության նշանակումը համարվել է այդ հանգամանքը պարզելու միակ հնարավոր միջոցը:

Ինչ վերաբերում է ճանապարհատրանսպորտային պատահարի հանգամանքները պարզելու համար դատաավտոտեխնիկական փորձաքննության նշանակման հետ զուգահեռների անցկացմանը, ապա կարծում եմ՝ համեմատությունը տեղին չէ, քանի որ գործնականում կարող են լինել իրավիճակներ, երբ անձի հոգեկան հիվանդության վերաբերյալ փաստաթղթերի առկայության պայմաններում վարույթն իրականացնող մարմինը հրաժարվի փորձաքննություն նշանակել՝ անմեղսունակության հանգամանքը հաստատված համարելով հիշյալ փաստաթղթերով: Սակայն, հնարավոր են իրավիճակներ, որ

անձը՝ տառապելով հոգեկան հիվանդությամբ, հանցագործությունը կատարելու պահին գիտակցի իր արարքի վտանգավորությունը և ունակ լինի ղեկավարել այն. իսկ այդ հանգամանքները կարող են հաստատված համարվել բացառապես փորձաքննության արդյունքում:

Դժվար է համաձայնել նաև Հեղինակի այն պնդմանը, որ անձի մեղսունակության հարցի որոշման համար փորձաքննություն նշանակելու պարտադիր պահանջը սահմանափակում է քննիչի դատավարական ինքնուրույնությունը: Նախ, Հեղինակն ինքն է նշում, որ անգամ նախատեսված չլինելու պարագայում քննիչը յուրաքանչյուր դեպքում անվերապահորեն պետք է նշանակի դատահոգեբուժական փորձաքննություն, հետևաբար պարտադիր պահանջի օրենսդրական նախատեսումը նպատակ է հետապնդում կանխել վարույթն իրականացնող մարմնի ոչ իրավաչափ վարքագիծը: Բացի այդ, քրեական դատավարությանը օրենսգիրքը նախատեսում է դեպքեր, երբ քննչական կոնկրետ գործողության կատարումը պարտադիր է (օրինակ՝ մեղադրյալի հարցաքննություն, առերեսում), ինչը երբևէ չի դիտվել և չի կարող դիտվել որպես քննիչի ինքնուրույնության սահմանափակում:

2. Հեղինակը քննադատում և անընդունելի է համարում ձևավորված իրավակիրառական այն պրակտիկան, երբ անձին ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննության ենթարկելու միջնորդության հետ զուգահեռ ներկայացվում է նաև անձի նկատմամբ կիրառված կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդություն: Հեղինակն արձանագրում է, որ անձի ֆիզիկական ազատությունը սահմանափակող դատավարական հարկադրանքի մեկից ավելի միջոցների միաժամանակյա կիրառումն անթույլատրելի է, քանի որ, երբ դատավարական հարկադրանքի որևէ միջոցի կիրառմամբ հնարավոր է հասնել հետապնդվող նպատակին, ապա այդ նույն նպատակի կենսագործմանն ուղղված այլ հարկադրանքի միջոցների կիրառումը դառնում է առարկայազուրկ: Այսինքն՝ անձի ֆիզիկական ազատությունը սահմանափակող մի քանի դատավարական հարկադրանքի միջոցների միաժամանակյա կիրառումն անընդունելի է, երբ կիրառված դատավարական հարկադրանքի միջոցներից յուրաքանչյուրը հավասարապես հնարավորություն է տալիս չեզոքացնելու անձի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկն այդ միջոցի կիրառման ողջ ժամանակահատվածում:

Նախ տարբեր են նման դեպքերում անձի ազատության սահմանափակման

հիմքերը: Բացի այդ, Հեղինակի առաջարկները լուծում չեն կարող լինել այն իրավիճակների համար, երբ կալանավորման ժամկետը չի երկարացվում, անձը տեղավորվում է բժշկական հաստատությունում փորձաքննության ենթարկվելու նպատակով, սակայն փորձաքննությունն ավարտելուց հետո շարունակում են առկա լինել խափանման միջոցի կիրառման հիմքերը:

Հեղինակն առաջարկում է այն դեպքում, երբ կհաստատվի, որ անձը մեղսունակ է, հիմք ընդունելով ՀՀ քր. դատ. օր. 142-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը, կրկին կալանավորել անձին: Կարծում եմ, այս հիմքով անձը չի կարող կրկին անգամ կալանավորվել, քանի որ փորձաքննությամբ մեղսունակության փաստի հաստատումը կրկին կալանավորման համար նոր և էական հանգամանք չի կարող համարվել: ՀՀ քր. դատ. օր. 142-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված նոր և էական հանգամանքները վերաբերում են կալանավորման հիմքին և պայմաններին, բայց ոչ երբեք անձի մեղսունակության փաստի վերահաստատմանը (կանխավարկածը անձի մեղսունակ լինելն է):

Ըստ Հեղինակի՝ գործող կարգավորումների դեպքում որպես նշված իրավական խնդրի հնարավոր լուծում կարող է լինել այն, որ իրավակիրառ պրակտիկայում դատարաններն անձին բժշկական հաստատությունում տեղավորելու վերաբերյալ որոշմամբ դրա ի կատար ածումը պայմանավորեն վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացնելու հետ: Նման լուծում առաջարկելով, սակայն, Հեղինակը չի կոնկրետացնում, թե մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազն օրենքում նախատեսված որ հիմքով պետք է վերացնի ընտրված խափանման միջոցը:

Հրաչյա Աղեկյանի վերաբերյալ գործով վճռաբեկ դատարանի դիրքորոշումն այս դեպքում կիրառելի չէ այն պարզ պատճառով, որ այն վերաբերվում է պատիժը կրող անձի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի կիրառման աննպատակահարմարությանն ու անթույլատրելիությանը: Սակայն ոչ մի խոչընդոտ առկա չէ անձի կողմից պատիժ կրելուց հետո, եթե առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված հիմքերը, անձի նկատմամբ կալանքն ընտրել որպես խափանման միջոց: Մինչդեռ քննարկվող պարագայում, երբ անձի նկատմամբ կիրառված է եղել կալանավորում և դրա ժամկետը չի երկարացվել, այն պատճառաբանությամբ, որ անձի նկատմամբ նշանակվել է ստացիոնար փորձաքննություն, փորձաքննության ավարտից հետո

դժվար, գրեթե անհնարին կլինի դատարանին հիմնավորել, որ շարունակում են առկա լինել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

3. Հեղինակի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթներից է այն, որ հոգեկան հիվանդությամբ տառապելու վերաբերյալ հիմնավոր կասկածի ծագման պահից մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդումը պետք է վերաճի հանրային քրեական հետապնդման (պաշտպանության ներկայացվող թիվ 4 դրույթ): Քրեական հետապնդման տեսակի փոփոխությունը քրեական վարույթի ավելի վաղ՝ անձի հոգեկան առողջության վերաբերյալ փորձաքննության նշանակման պահի հետ պայմանավորելու հիմքում Հեղինակը դրել է այն հիմնավորումը, որ անձի ինքնուրույն և ազատ կամահայտնություն պահանջող հաշտությունը չի կարող կնքվել, քանի դեռ ենթադրյալ հանցանք կատարած անձի՝ նշված հատկանիշներին համապատասխանող կամահայտնության արտահայտման հնարավորությունը դրված է հիմնավոր կասկածի տակ և բացակայում է այն հերքող մասնագիտական օբյեկտիվ եզրակացությունը: Սակայն արդեն հաջորդ՝ պաշտպանության ներկայացվող հինգերորդ դրույթում Հեղինակը նշում է, որ. «Հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի համեմատ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձը, ում մեղսագրվում է քրեական օրենքով արգելված արարքի կատարում, չի կարող ունենալ առավել սահմանափակ ծավալի իրավունքներ միայն այն պատճառով, որ տառապում է հոգեկան հիվանդությամբ»: Ըստ էության պաշտպանության ներկայացվող այս երկու դրույթները մեղադրյալի և հանցանք կատարած հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի իրավունքների ծավալի հետ կապված հակասական են:

4. Հեղինակն իրավացիորեն նշում է, որ քրեական դատավարության օրենսգրքը չի կարգավորում այն իրավիճակները, երբ, ԲԲՀՄ-ի կիրառման գործի դատաքննության ընթացքում պարզվում է, որ անձն այլևս չի տառապում հոգեկան հիվանդությամբ և գործը պետք է քննության առնվի ոչ թե հատուկ, այլ ընդհանուր հիմունքներով անցկացվող վարույթի շրջանակներում: Ըստ Հեղինակի, նշված խնդրի կապակցությամբ իրավակիրառողները հաճախ նշում են, թե դատարանը կարող է կարճել ԲԲՀՄ-ի կիրառման վարույթը, որից հետո կարող է քրեական գործի վարույթը վերսկսվել և անձին առաջադրվել մեղադրանք: Այդ մոտեցումը Հեղինակն ընդունելի չի համարում, քանի որ այն, ըստ նրա, առնվազն կվտանգի կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (*non bis in idem*) սկզբունքը՝ հաշվի առնելով, որ

վերսկսված վարույթի շրջանակներում անձին չի կարող առաջադրվել այն նույն մեղադրանքը, որում նկարագրված արարքի կապակցությամբ դատարանը կայացրել է գործի վարույթը կարճելու մասին վերջնական որոշում:

Թեև խնդրի լուծմանն ուղղված Հեղինակի առաջարկն ընդհանուր առմամբ ընդունելի է, սակայն, այն մոտեցումը, որ այսօր իրավակիրառական պրակտիկայում տրվող լուծումները հակասում են կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքին, կարծում են չափազանցված են և արդյունք են նշված սկզբունքի բովանդակության չափազանց նեղ մեկնաբանության:

Առենախոսության վերաբերյալ ներկայացված այս նկատառումները, այնուամենայնիվ, որևէ կերպ չեն նսեմացնում աշխատանքի արժեքը, ինչպես արդեն իսկ նշվեց գիտական վերլուծությունների խորությամբ և համապարփակությամբ այն համապատասխանում է նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Առնոլդ Սամվելի Վարդանյանը արժանի է ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Գրախոսող՝

«Վ զխավոր դատախազի տեղակալ,
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Դ. Մ. Մելքոնյան»

26.06.2018

Մ. Վ. Մելքոնյանի ստորագրությունը հաստատված է՝
ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ջեկանի քեյսակալ
Իրավաբ. գիտ. ջեկար, պրոֆեսոր

Ն. Վ. Դանիելյան

